

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԻ ԳԼԽԱՒՈՐ ԷՏԱՊՆԵՐԸ.

Պատմական ակնարկ.

Թիւրքիան ապրում է այժմ թերեւս ամենակրիտիքական վարկեանը իւր ամբողջ պատմութեան ընթացքում: Նրա զէնքի նրա անուան ու հեղինակութեան պատիւը երբէք այնպէս ծանր ու խոր չէր վիրաւորուել, երբէք այնքան չէր ընկել ստորացել, ինչպէս այժմ: Քրիստոնեայ պետութիւններին դարեր շարունակ դբազեցնող արեւելեան հարցը երբէք այնպիսի թափով հանդէս չի եկել, երբէք այնպէս մօտ չի թուացել իւր լուծմանը, ինչպէս ներկայ օրերում: Դարերի երկար շղթան պատմել է մեզ շարունակ թուրքական-օսմանեան ցեղերի վայրագութիւնները, նրանց կամայական ու սանձարձակ քամահաճոյքները քրիստոնեայ հպատակ ազգերի, մանր ու թոյլ ժողովուրդների վերաբերմամբ: Այսօր կարծես երկար տառապանքի ու անարգանքի վրէժը սրտերին՝ դուրս են եկել այդ մանր ազգերը-Բալկանեան թերակղզու սլաւոն ու յոյն ժողովուրդները մաքրելու իրանց հաշիւները այն պետութեան և ազգի հետ, որի լծի տակ հեծում էին մի քանի դար շարունակ և դեռ այնուհետեւ էլ շարունակում էին ականատես վկայ լինելու իրանց ազգակիցների խոր տառապանքին: Բողարների յաղթական բանակները, սերբ ու յոյն զօրասիւնների անպարտելի յառաջխաղացութիւնը, Բալկանեան մանր ազգերի այդ հոյակապ ծառացումը «գեաւոր»-ների մշտական թշնամի թուրքերի դէմ—ապացոյց է ամբողջ աշխարհի առաջ, որ այժմ արդէն դիւանագիտական նրբութիւնների փոխարէն մանր ու «երկրորդական» ազգերը թնդանոթի որոտով են խօսում և նրանց լեզուն թուրքիայի համար շատ աւելի ազդու է թուում և ահաւոր, քան թէ մինչև այժմ որ և է մէկը խօսած լինէր նրա հետ:

Բազմակնճիւ արեւելեան հարցը դարձեալ հրապարակ է

նետուում այսօր և բոլոր նշաններից երևում է, որ նրա թափն այսօր զերազանցում է այդ հարցի արտայայտութեան բոլոր ձևերը: Ներկայ յօդուածով ուզում եմ մի պատմական տկնարկ ձգել արևելեան հարցի ծագման, զարգացման և նրա ընթացքի մասին: Այս աշխատանքիս նպատակն է, թիւրքիայի և Բալկանեան ազգերի ներկայ արիւնոտ ընդհարման պատճառները պատմական լոյսի մէջ զննել ու աւելի տեսանելի կայուցանել նրա գոյութիւնը:

I.

Թուրք ցեղերը շատ վաղ ժամանակներից ապրում էին Միջին Ասիայի տափաստաններում ու ենթակայ էին անվերջ թափառումների: Ներկայ Օսմանեան թուրքերի նախապապերը արդէն 8-րդ դարում Իրանի տէրերն էին ու մահմեդականութիւն ընդունած: Այդտեղից նոքա հետզհետէ դէպի արեւմուտք են առաջանում և նորանոր նուաճումների յետեւից ընկնում: Այդ գործում նրանք բնականաբար պիտի ընդհարուէին այդ կողմերի քաղաքական ամենամեծ ուժի՝ Բիւզանդական կայսրութեան հետ: 13-րդ դարում թուրք ցեղերն արդէն Փոքր Ասիայի լաւագոյն նահանգներին տէր էին դարձել: Նրանց առաջնորդներից մէկը Օսմանը իրան սուլթան է անուանում և կազմակերպում է Օսմանեան պետութիւնը: Հէնց առաջին սուլթանի անունով էլ թուրքական այդ ցեղը Օսմանեան է կոչւում:

Չարմանալի արագութեամբ աճում է այնուհետեւ Օսմանեան ցեղի յառաջխաղացութիւնը և զինւորական փառքը: Բիւզանդական կայսրութեան նահանգները մէկը միւսի յետեւից անցնում էին Օսմանեան յաղթող սուլթաններին: Մահմեդ II-ի ժամանակ առնւում է նաև ծիրանածին կայսրների վերջին կայանը՝ Կոստանդնուպօլիսը և սուրբ Սոֆիայի հոյակապ ու զարմանալի տաճարի խաչը վերցւում է, նրա փոխարէն հպարտ կիսալուսինը հաստատուում (1453 թ.):

Մահմեդ II-ի յաջորդներն հետևեալ սուլթաններն են լինում:

Բայազեդ II (1481—1512)	Մուստաֆա II (1695—1703)
Սելիմ I (1512—20)	Ահմեդ III (1703—30)
Սուլէյման II (1520—66)	Մահմուդ I (1730—54)
Սելիմ II (1566—74)	Օսման III (1754—57)
Մուրադ III (1574—95)	Մուստաֆա III (1757—74)
Մահմեդ III (1595—1603)	Արդիւլ Համիդ I (1774—89)
Ահմեդ I (1603—17)	Սելիմ III (1789—1807)
Մուստաֆա I (1617—18)	Մուստաֆա IV (1807)
Օսման II (1618—22)	Մահմուդ II (1808—39)
Մուրադ IV (1623—40)	Արդիւլ Մեջիդ (1839—1861)
Իբրահիմ (1640—48)	Արդիւլ Ազիզ (1861—76)
Մահմեդ IV (1648—87)	Մուրադ IV (1876)
Սուլէյման III (1687—91)	Արդիւլ Համիդ II (1876—1908)
Ահմեդ II (1691—95)	Մուրադ V 1908-ից:

Այս սուլթաններն ի հարկէ միատեսակ բախտի և յաջողութիւնների չեն հանդիպում: Ընդհանուր առմամբ պէտք է ասել, որ 15-րդ 16-րդ և 17-րդ դարերը Օսմանեան արտաքին փառքի, ծաղկման, նուաճողական զործողութիւնների ամենաբարձր շրջանն է: Այս դարերում է, որ նրա կայուածքներն ամենաընդարձակ չափերի են հասնում: Իրար յետևից առնւում են Պելեպոնեսն ու Ալբանիան, Ղրիմն ու Մոլդաւիան, Պարսկաստանն ու Հայաստանը, Ասորիքը, Պագեստինը, Եգիպտոսը: Սելիմ I-ը արբեցած այդ յաղթութիւններով իրան հաչակում է խալիֆա մահմեդական բովանդակ աշխարհում 1517 թ: 16-րդ դարի սկզբում նուաճւում է Սերբիան, անձնատուր է լինում Բելգրադ մայրաքաղաքը, Օսմանեան զօրքերը Վիեննային են մօտենում ու Հունգարիայի մեծագոյն մասը միացնում Թուրքիայի կայսրութեանը: Ապա Վրաստանն ու Միջագետքն ևս նոյն վիճակին են ենթարկում:

Այս բոլոր նուաճումները կատարւում էին շատ ընդարձակ ծրագրով: Թուրք բանակներն երեք աշխարհամասերում էին գործում՝ Աֆրիկայում, բայց ամենից շատ Ասիայում ու մանաւանդ Եւրոպայում: Սուլէյման II-ի օրով

Թուրքերի պատերազմական նաւերը տէր դարձան Սև ծովին, Արշիպելագի ու Յոնիականի ջրերին և ասպատակութիւնների ասպարէզ դարձրին Միջերկրական ծովի բոլոր ափերը:

Քաղաքական աճման այդ արագ բարձրացմանը նուաճողական զործողութիւնների այդ անօրինակ ծաւալմանն ու յաջողութեանը բացի Օսմանեան երիտասարդ, թարմ ու եռանդուն բանակների անձնական ինքնայատուկ հանգամանքներից, մեծապէս նպաստել է նաև այն հանգամանքը, որ նուաճուած երկիրների համարեա բոլորի մէջ տիրում էր վերին աստիճանի խառնակ գրութիւն: Ուրիշ խօսքով, օսմանցի թուրքերը արագ նուաճումներ էին անում իրանց ցեղակից մանգոլների նման կունթաճ մի կողմից իրանց պատերազմական առաւելութիւնների, միւս կողմից նուաճուած ազգերի ներքին երկպառակեալ ու անմիաբան վիճակի վրայ: Բայց ուր որ օսմանցիք զնում էին, իրանց հետ տանում էին նաև իրանց բեժիմը, ծայրայեղ բռնակալութիւն, լիակատար քմահաճոյք—իսկ յատկապէս քրիստոնեաների նկատմամբ դրանց հետ միասին նաև դազանային խստութիւն և անգթութիւն: Այդ կէտում մեծ դեր էր կատարում կրօնը: Իսլամը—օսմանցիների կրօնը իւր ներքին էութեամբ հակառակ էր քրիստոնէութեան և իւր կողմնակիցներին հանդերձեալ երջանիկ կեանք էր խոստանում միայն կրօնի ու հաւատի նախանձախնդրութեան աստիճանի համեմատ. առաջին մեծ մարգարէն իւր հետեւողներին սիրոյ և գթասրտութեան բարձր սկզբունքները չէր տալիս, այլ կոյր հնազանդութիւն էր քարոզում Աստուծոյ կամքին: Իսլամ խօսքն էլ հէնց այդ էր նշանակում. կատարեալ յանձնումն Աստուծոյ կամքին: Իսկ այդ կամքն ասում էր. հրով ու սրով տարածել մահմեդականների կրօնը. նուաճել քրիստոնեայ ազգերը և իսլամին դարձնել: Ուրեմն Օսմանեան բանակները իրանց նուաճումների ընթացքում կատարում էին խալիֆայի՝ մահմեդականների բարձրագոյն կրօնապետի պատուէրները—կատարում էին իրանց կրօնական պարտականութիւնը, այն էլ

այնպիսի ոգևորութեամբ, երիտասարդ ազգին յատուկ այնպիսի մոլեռանդութեամբ:

Սակայն այդպիսի ընդարձակ, այլազան, բազմակրօն և բոլորովին տարբեր կուլտուրաների մի զանգուած—ինչպիսին էր Օսմանեան կայսրութիւնն իւր փառքի ու զինւորական ուժի գաղաթնակէտին հասած—ապագայ թուլացման, քայքայման և դանդաղօրէն բայց շարունակաբար մեռնելու սաղմերն իր մէջ էր կրում: Սուլէյման II-ի մահով, որ Հունդարիա արշաւելիս մեռաւ, վերջանում է իսկապէս նուաճող, եռանդուն ու աշխարհակալ սուլթանների փայլուն շարքը: Նրա յաջորդ Սելիմ II-ի ժամանակ թուրքաց նաւատորմիցը Սլի-փաշայի ղեկավարութեան տակ մի չտեսնուած ջարդ է կրում Լեպանտոյի (Վորլնթոսի) ծոցում 1571 թուին հոկտ. 15-ին, կորցնելով 20,000 զինւոր, 130 նաւ, 100-ից աւելի նաւ էլ զերի է ընկնում: Լեպանտոյի կռուի մէջ իսկապէս տաճկական նաւատորմիցը, որ մինչև այդ ժամանակ ազատ ասպատակում էր Միջերկրական ծովի բոլոր ծոցերն ու ավերքը, մահացու հարուած է ստանում և միանգամից մէջտեղից վերանում է նրա գերիշխանութիւնն ու գերազանցութիւնը քրիստոնէականի նկատմամբ: Սակայն Թիւրքիայի միայն ծովային ուժը չէր, որ խորտակուեց Վորլնթոսի այդ կռուում: այդ օրուանից Թիւրքիան կորցրեց նաև իւր ցամաքային զօրքի գերիշխանութիւնն Եւրոպայում: Հոկտեմբերի 15-ը (1571) սկիզբն է Թիւրքիայի աստիճանական անկման:

Սպանացիք էին, որ սկիզբ դրին թուրքական զօրութեան քայքայման: Փիլիպոս II Սպանացին էր, որի Դոն Ժուան որդին Լեպանտոյի ծոցում միացած Վենետիկոց հետ ջախջախիչ հարուածն հասցրեց թուրքերին: Սպանացոց զործն այնուհետև շարունակեցին միւս պետութիւնները. Ֆրանսիան, Աւստրիական թագաւորութիւնը և ապա Ռուսաստանը: Մանաւանդ այս վերջին պետութիւնը կարծես իրան նպատակ էր դրել թուրքերին աստիճանաբար արիւնաքամ անել:

Թուրք սուլթանների մայրաքաղաքի վրայ ռուսաց

Թագաւորները վաղուց աչք ունէին: Սկզբում այդ ձրգտումները Ֆանտաստիք ու անիրազործելի կերպով էին արտայայտուում: Բայց սկսած Պետրոս Մեծից թուրքերի նկատմամբ ուսաց ունեցած քաղաքականութիւնը աւելի իրական ճանապարհներ է գտնում: Ռուսաստանի ընդհարումը թուրքիայի հետ անխուսափելի էր: ամենից առաջ այն պատճառով որ Ռուսաստանը շարունակ հարու գիմելով ուղի պիտի գտնէր զուրս գալու անձայր տափաստաններից ու կապուելու Եւրոպական միւս երկիրների հետ աւելի դիւրին ճանապարհներով—նա պէտք է բնական անհրաժեշտութեամբ մի կողմից Բալտիկ ծովին հասնէր ու տիրէր: միւս կողմից եթէ ուզում էր ապրել ու առաջ գնար պէտք է հասնէր ու տիրէր նաև Սև ծովին: Հարուսից Սև ծովն էր միայն որ հնարաւորութիւն էր տալու Ռուսաստանին յարաբերութիւն ունենալու աւելի քաղաքակիրթ ազգերի հետ: Սև ծովի միջոցով էր միայն որ նա կարող էր Միջերկրականի երկիրները զուրս գալ: Իսկ մի կենսական պահանջ էր Ռուսաստանի համար. դա պահանջում էր նրա քաղաքական, տնտեսական տուեարական կեանքի զարգացումը:

Ռուսաց թագաւորներից առաջինը որը այդ խնդիրը պարզօրէն ըմբռնում է, Պետրոս Մեծն էր: Նա զգում էր որ կռիւն անխուսափելի էր կամ Բալտիկ ծովին և կամ Սև ծովին տիրելու համար: Իրա համար նա պիտի կրօնէր կամ շվեդների հետ և կամ թուրքերի: Քաղաքական հանգամանքներն այնպէս են զարուում որ նա ստիպուած է լինում որոշ մոմենտում երկուսի դէմ ևս միաժամանակ կռուել: Սակայն Պետրոս Մեծի նորակազմ պետութիւնն անկարող էր այդ ծանր բեռը միաժամանակ տանել ու թէև այդ հանձարեղ կայսրը շվեդներին վերջնականօրէն ջարդում է ու հասնում Բալտիկ ծովին, բայց զբանից առաջ 1711 թուին նա ստիպուած է լինում հրաժարուել սևծովեան ծրագիրներից ու բոլորովին մաքրել Ռուսաստանի հարաւային սահմանները, այլ և Ազով բերդը յետ տալ թուրքերին:

Այնուհետև աւելի յաճախ են դառնում ռուսաց և Թուրքաց կռիւները: Առիթներ բաւականաչափ կային:

Ղրիմի խանութիւնը, որ իւր մէջ պարունակում էր ամբողջ Ղրիմի Թերակղզին և Ազով ծովի բոլոր ափերը, բնակարան էր անհանգիստ ու խռովարար մահմեդականներին՝ Ղրիմի Թուրքերին: Այդ խանութեան հիւսիսային սահմանները խառնւում էին Մոսկովեան Թագաւորների պետութեան հետ ու վերջինս յաճախ ենթակայ էր Ղրիմի Թուրքերի ասպատակութիւններին ու աւազակային զոր-ծոցութիւններին, որոնք համարեա օժանդակութիւն և ներշնչումն ստանում էին Պօլսից: Ռուս-Թուրքական յարաբերութիւններն աւելի ևս վատանում էին շնորհիւ այն հանգամանքի, որ Դոնի կազակները, որոնք ոչ Ղրիմի խանութեանն էին հպատակ և ոչ ռուսաց պետութեանը պատկանում, բայց իրանց քաղաքական համակրանքներով հակուած էին աւելի Մոսկովեան ցարերի կողմը—իրանց կողմից ևս մշտական ասպատակութիւններ էին ենթարկում Ղրիմի խանութեան սահմանները և այդպիսով աւելի ևս ուժեղացնում Թուրքաց սուլթանների կասկածները, թէ այդ ասպատակութիւններն ու արշաւանքները կատարւում են ռուսաց Թագաւորների Թելադրութեամբ: Ճիշտ է, ռուսաց Թագաւորներն ամեն անգամ արդարանում էին Բարձրագոյն Դրան առաջ ասելով, թէ Դոնի կազակները աւազակներ ու գողեր են, որոնք ոչ մի կապ և ոչ Թելադրութիւն չունին Մոսկովի պետութիւնից, բայց այդ հաւաստիացումները արժէք չունէին Պօլսում և Թուրքերը շատ լաւ հասկանում էին ռուսների մտադրութիւնը:

1735 Թուին Ռուսաստանը Աւստրիայի հետ միաբանած պատերազմ են յայտարարում Թիւրքիային: Առիթը Ղրիմի Թուրքերի ասպատակութիւններն էին դարձեալ: Թէև ռուսները շատ յաջող կուում են Թուրքերի հետ, թէև ռուս զենեաւները առնում են Ազովը, Պերեկոպը, Բախչիսարայը, ասպատակում և աւերում են Ղրիմը, վերցնում են Օչակովը և արդէն ուզում են Դանուբը անցնել, բայց հէնց այդ յաջողութիւնները պատճառ են լինում, որ

Աւստրիան կասկածելով Ռուսաստանի չափազանց զօրեղանալուն և այդ բանը անցանկալի համարելով, շուտով առանձին հաշտութիւն է կապում թիւրքիոյ հետ: Խաղաղութիւնը դուրս գալու համար շատ աշխատում է Պօլսի Ֆրանսիական դեսպանը, որի միջնորդութեամբ և կուող կողմերը ղէնքերը վայր են դնում: Ֆրանսիան չէր ցանկանում թիւրքիայի թուլացումը, որովհետև չէր ցանկանում Աւստրիայի կամ Ռուսաստանի ուժեղացումը: Ռուսաստանը մնում է մենակ. նա անկարող էր կռիւն յաջողութեամբ մենակ շարունակելու. երկար բանակցութիւններից յետոյ 1739 թուին Ռուսիան և թիւրքիան ստորագրում են Բելգրադի խաղաղութիւնը: որն ընդհանուր առմամբ աննպաստ էր Ռուսաստանի համար, թէև Ազովը մնում էր Ռուսաստանին, բայց նրա ամրութիւնները պէտք է քանդուէին, շրջակայքը պէտք է անմարզաբնակ դառնար, ուսաներն առաջուայ պէս իրաւունք չունէին Սև ծովի վրայ ոչ մի նաւ պահել, ոչ պատերազմական և ոչ առևտրական: Թիւրքիան նոյնիսկ չէր համաձայնուել ընդունել Ռուսաց վեհապետների կայսր տիտղոսը, որ նոքա ձեռք էին բերել Պետրոս Մեծի օրով—հիւսիսային մեծ պատերազմի վախճանին:

Կրօնական մոլեռանդութիւնը ու ատելութիւնը, որ մահմեդականներն բնականից ունէին դէպի քրիստոնեաները, ինչ խօսք, որ այժմ դնալով սաստկանում են, որովհետև սաստկանում են նաև քրիստոնեայ պետութիւնները՝ Աւստրիայի և մանաւանդ Ռուսաստանի յառաջխաղացութիւնն ու արշաւանքները դէպի թուրքիա: Թուրքիան սկսում է այժմ նաև պաշտօնապէս վատ նայել իւր քրիստոնեայ հպատակներին: Հալածանքները քրիստոնեաների դէմ զօրեղանում են և նրանց դուրսիւնն գնալով անտանելի է դառնում: Իսկ քրիստոնեաները բազմաթիւ էին թիւրքաց կայսրութեան մէջ: Միայն Եւրոպական թիւրքիայում կային յոյներ, սերբեր, բոլղարներ, մոլդաւացիք, վալախներ և ուրիշ մանր ազգութիւններ:

Բելգրադի խաղաղութիւնից յետոյ, երբ թիւրքիայի

վերաբերմունքը դէպի քրիստոնեայ հպատակները վատթարանում է, Բաղկանեան ցեղերի մէջ մի մեծ շարժում է սկսւում: Նոքա խումբ խումբ հարիւրներով և հազարներով թողնում են իրանց տունն ու տեղը, իրանց ստացուածքն ու կալուածները և քաշւում Ռուսաստան: Արովհետև այդ շարժումը պատահական բնաւորութիւն չէր կրում, ուստի բնական է, որ Ռուսաց կառավարութիւնը որոշ դիրք բռնէր այդ երևոյթի նկատմամբ: Նա չէր ուզում, որովհետև չէր կարող, առ այժմս պատերազմի բռնուել թիւրքիայի հետ, ուստի ստիպուած էր այդ հոսանքի դէմ արգելքներ զնել: Պաշտօնապէս մի քանի կայսերական հրամաններ են զուրս գալիս, որոնց իմաստն այն էր, որ սլաւոններն ու բաղկանեան այլ քրիստոնեայ ժողովուրդները պէտք է դադարեն մասսայական գաղթից, Ռուսաստանը չի կարող նրանց տեղ տալ, որովհետև չի ուզում իւր «բարեկամական» յարաբերութիւնները խզել թիւրքիայի հետ: Սակայն թիւրքիայի կառավարութեան եղանակը վաղուց արդէն անտանելի էր դարձել և նրա ծանր լծի տակ տանջւող քրիստոնեայ ցեղերն անկարող էին այլ ևս զանազան հրամանների ու արգելքների առաջ կանգ առնել, մանաւանդ, որ սրանք հաւատացած էին, որ Ռուսաստանից եկած այդ արգելքները լոկ ձևական էին, Ռուսաստանն ստիպուած էր այդպէս վերաբերուել, բայց սրտանց բոլորովին այլ բան էր ցանկանում:

II

18-րդ դարի կէսերին, 1751 թուին Բաղկանեան ժողովուրդները նորից ալեկոծուեցին, սև լեռնցիք, բոլղարները, վալախներն ու սերբերը թուրքիայի վայրագ լծից գնդակած՝ վճռել էին ինչ էլ որ լինի անցնել Ռուսաստան ու այնտեղ՝ մեծագոյն սլաւոն ազգի ապահով հովանաւորութեան տակ ազատ ապրել: Չորս տարի անց, 1755 թուին սև լեռնցոց միտրապոլիտը պաշտօնապէս դիմում է Ռուսաստանին և օգնութիւն խնդրում նրանից ընդդէմ թուրքերի: Ռուսաստանի գլուխն այդ օրերին շատ խառն էր:

Գլխաւոր արդեւքը—լեհական խնդիրն էր: Լեհաստանն ապ-
րուժ էր իւր անկախութեան, իւր միջնադարեան հզօր
փառքի վերջին խղճուկ օրերը: Նրա շրջապատի մեծ պե-
տութիւններից իւրաքանչիւրը՝ թէ Պրուսիան, թէ Աւս-
տրիան և թէ մանաւանդ Ռուսաստանը՝ մի ձգտում ունէր
միայն— այդ մեռնող, քայքայւող պետութիւնից որքան կա-
րելի է մեծ բաժին ստանալ: Ռուսաստանը Թիւրքիայի հետ
որոշ համաձայնութիւն ունէր, որի համեմատ նա չպիտի
խառնուէր լեհական գործերին և զօրք չպիտի մտցնէր լե-
հական հողը: Բայց Ռուսաստանը հակառակ այդ դաշնա-
դրութեանը, ոչ միայն խառնուժ է, այլ և նրա զօրքերը
գրաւում են Վարշաւան, թաղաւոր են դնում Եկատերինա
կայսրուհու թեկնածու Ստանիսլաւ Պոնեատովսկուն: Լե-
հական ազգային կառավարութիւնը դժգոհ ունենքի մի-
ջամտութիւնից դիմում է Բարձրագոյն Իրան: Պրանսիական
ոսկին էլ շատ բան է տեսնում: Բայց Թիւրքիան ինքն ևս
նկատում էր ուսաց կառավարութեան հակառակ ընթաց-
քը: 1768 թուին հոկտեմբերի 6-ին մեծ վեղիւրը իւր մօտ է
կանչում ուսաց Պոլսի գեսպան Օրբեչկովին, նրա հետ
շատ վիրաւորական ու կոպիտ կերպով է խօսում և ապա
հրամայում է նրան Եօթնաշտարակեան բերդում բանդար-
կել: Այդ վարմունքով Թիւրքիան ինքը խզում է խաղաղ
յարաբերութիւնները Ռուսաստանի հետ և նշան է տալիս
պատերազմական գործողութիւնների: Բայց միւս կողմից,
որպէս զի Եւրոպայի հասարակական կարծիքը և մեծ պե-
տութիւնների համակրանքը շահի աշխատում է ամբողջ
աշխարհի առաջ ցոյց տալ, որ խաղաղ յարաբերութիւնների
խզման պատճառը ոչ թէ ինքն է, այլ Ռուսաստանը, որը իբր
թէ երբեք չի պահում իւր ստորագրած դաշնադրութիւնների
խմատը, բերդեր է շինում Թիւրքական սահմանների վրայ,
շարունակ խառնում է լեհական գործերի մէջ ու այս ան-
գամ էլ գահ է բարձրացրել մի այնպիսի մարդու, որը «մե-
հասարակ սպայ էր, անարժան թաղաւոր լինելու, որի
տոհմից և ընտանիքից ոչ ոք թաղաւոր չէ եղել»:

Թիւրքիայի մեղադրական կէտերն ահա դրանք էին:

Սակայն Ռուսաստանի համար ինչ խօսք, որ դրանք չունեն որևէ իրական նշանակութիւն: Եկատերինա մեծ կայսրուհու վաղուցուայ նուիրական ցանկութիւնն էր ամբողջ ուժով ընկնել Թիւրքիայի վրայ և թուրքերին քշել այնտեղ, որտեղից նրանք եկել էին—Ներսիսյան մաքրել այդ «ասիական բարբարոսներին»: Այդ միասիային նա իրան կրկնակի պատճառով կոչուած էր համարում: Նախ որ ինքը մի մեծ սլաւոն պետութեան զլուխ էր ու չէր կարող թոյլ տալ, որ իւր ցեղակիցները, սերբերն ու բուլղալները, չեբնագոր իք ու վալախները մի մահամեղական ժողովրդի ու պետութեան ձեռքից այդպէս անպատիժ կերպով մշտական տանջանքի ու արհաւիրքի մէջ ապրեն, և ապա Ռուսաստանը չէր կարող երբևիցէ թողնել Ճիրանածին կայսրների մայրաքաղաքը տանող ճանապարհը: Ինքը յունագաւան, չէր կարող տանել, որ յունագաւանութեան կենդրոնը, որտեղից լոյս է ծագել ամբողջ Ռուսաստանին, անհաւատների ձեռքն ընկնի: Այս երկու մոմենտների վրայ աւելանում է նաև մի երրորդը, աւելի իրական և աւելի ներգործական մոմենտը—քաղաքականը, որի մասին վերև ակնարկեցինք: Սև ծովը պէտք է վաղ թէ ուշ դառնար ռուսական և որքան շուտ այնքան լաւ: Այդ հնարաւոր էր միայն Թիւրքիայի պարտութեամբ և նրա զօրութիւնը վերջնականապէս խորտակելովը:

Եկատերինային իւր մտադրութիւնների մէջ ամրացնում և նրան թե էր տալիս նաև այն հանգամանքը, որ յուսագրիչ լուրեր էին գալիս Բալկանեան ժողովուրդներից: Եկատերինային հաւատացնում էին, որ Բալկանեան քրիստոնեաները պատրաստ էին ամստամբելու Թիւրքիայի դէմ և որ բաւական է ռուս զօրքերը երևան, ընդհանուր ապստամբութեամբ և ռուս զօրքերի աջակցութեամբ հեշտութեամբ կարելի կլինի թօթափել Թիւրքիայի լուծը: Եկատերինան էլ իւր կողմից սլաւոն և յոյն լեզուներով բորբոքող կոչեր էր տպել տալիս ու ցրում Բալկանի քրիստոնեաների մէջ: Կարաղին անունով մի բուլղար սպայ, որ գտնուում էր ռուսաց զօրքի մէջ, շրջիկ մուրացկանի շոքեր է հագնում, գաւազանի մէջ պահում է այդ կոչերից

մէկը և շրջում է ամբողջ Բալկանեան թերակղզին ու ամեն տեղ ժողովրդին զէնքի ու ապստամբութեան կոչում: Կոչն ունենում է իւր ազդեցութիւնը: Սև Լեռան քաջ ժողովուրդը ապստամբութեան առաջին օրինակն է տալիս նրա օրինակին հետևում են Ալբանիան, Բոսնիան, Հերցեգովինան և Մակեդոնիան: Բայց արդէն դրանից առաջ կանոնաւոր պատերազմն սկսուել էր Ռուսաստանի և Թիւրքիայի մէջ:

Այդ պատերազմը, որ յայտնի է եկատերինայի առաջին թուրքական պատերազմ անունով, տևում է վեց տարի— 1768—1774 թուին: Այստեղ մեր նպատակի համար հետաքրքիր չէ պատերազմի ընթացքը. այսքանն ասենք, որ կռուի ամբողջ ընթացքում Թրանսիայի համակրու թիւնն ու շատ անգամ ծածուկ աջակցութիւնը Թիւրքիայի կողմն է եղել: Ռուս զօրապետները— Կուլիցին, Ա. Ռուսեանցև, Տոլակալ Ալ. Օրլով, Վ. Կուզորուկիյ փառաւոր յաղթութիւններով իրար յետևից կարճ ժամանակում վերցնում են թուրքական նշանաւոր ամրութիւնները, Չեսմենի նաւահանգստում ոչնչացնում են թուրքական նաւատորմի դրոշմը և նուաճում են ամբողջ Արևմտ: Սլաւոն ցեղերի հետ ապստամբութեան բոցով բռնում է նաև բովանդակ Մորէան:

Թիւրքիայի պատերազմական փառքն ու նրա զէնքի հմայքը արագօրէն ընկնում է: Ռուսաստանը նրան կորստեան անդունդ էր դահափիւթում: Բնականօրէն Ռուսիան խաղաղութեան դէպքում մեծամեծ պահանջներ պիտի անէր Թիւրքիայից, մի բան, որ երբէք ցանկալի չէր միւս պետութիւններին և մանաւանդ Աւստրիային: Սա զգալով վերահաս փտանգը, աշխատում է մօտենայ իւր հարևան, բայց թշնամի Պրուսիային, որի հետ միասին մտածում են օգուտ քաղել քաղաքական խառնակ դրութիւնից և իրար մէջ բաժանել Լեհաստանը: Ռուսաստանին էլ առաջարկում են հողային գրաւումներ անել ոչ թէ նոր նուաճուած թուրքերի հողերից, այլ Լեհաստանից: Երկար բանակցութիւններից յետոյ վերջապէս զլուխ է գալիս Թրիդրիխ Մեծի ջանքերով ու նրա նախաձեռնութեամբ Լեհաստանի բաժանումը: Երեք մեծ պետութիւն-

ներ — ուժեղի բացարձակ իրաւունքով իրար հետ միարանում են ու իրար մէջ բաժանում մի թոյլ բայց ընդարձակ երկիր—Լեհաստանը: Այդ գործողութիւնը յայտնի է պատմութեան մէջ Լեհաստանի առաջին բաժանում 1772 թուին: Ռուսաստանն ստանում է Սպիտակ Ռուսիան մէկ և կէս միլիոն բնակչով: Այդ եղանակով բաւարարուելով Ռուսաստանն իւր պահանջները չափաւորում է թիւրքիայի նկատմամբ, որի հետ և շուտով խաղաղութիւն է կնքում—1774 թուին, որն յայտնի է Կուչուկ Կայնարջու խաղաղութիւն: Ըստ այդ խաղաղութեան թիւրքիան ազատ էր կացուցանում Ղրիմի, Կուրանի և Բուջակի թաթարներին, որոնք այնուհետև անկախ խանութիւնների էին վերածւում, Ռուսաստանին տալիս էր Կերչը, Ենիկալէն, Ազովը, Կինբուռնը, Ղրաստանից, Մինգրելիայից գուրս էր հանում իւր զօրքերը, ռուսական առևտրական նաւերին ազատ երթևեկութիւն էր թոյլ տալիս Սև և Միջերկրական ծովերի մրայով, ռուսներին ճանաչում էր թիւրքիայի սահմաններում ուրիշ ազգերի մէջ որպէս ամենահովանաւորեալ ազգ, մեղքերի թողութիւն և ընդհանուր ամնիստիա էր տալիս յոյներին ու Բալկանեան բոյոր ցեղերին, որոնք պատերազմի ընթացքում մասնակցել էին կռուին կամ ապստամբութեան դրոշակ էին բարձրացրել, պարտաւորում էր Ռուսաստանին պատերազմական տուգանք վճարել չորս և կէս միլիոն ըուբլի, ճանաչում էր Ռուսաց ցարերի կայսր տիազոսը:

Մեկ համար ամենից կարևորը Կուչուկ Կայնարջու խաղաղութեան 7-րդ յօդուածն է, որով Բարձրագոյն Իուուր խոստանում է առաջին անգամ իւր գոյութեան ընթացքում հաստատուն պաշտպանութիւն քրիստոնեաներին, նոցա կրօնին և նոցա եկեղեցիներին: Ռուսաց պետութեան մինիստրներին թոյլ է տալիս Պոլսում կառուցուած և կառուցուելիք եկեղեցիների համար միջնորդութիւններ անել, ինչպէս այլ եկեղեցիների հօտերի համար առաջարկութեան նախաձեռնութիւն ունենալ, որովհետև «այդ առաջարկութիւնները գալիս են մի պետութիւնից, որ բացի

Հարեան լինելուց, այլ և անկեղծ բարեկամական կապերով կապուած է Թիւրքիայի հետ: Այսպիսով այդ խաղաղութիւնը առաջին անգամ պատմութեան մէջ հանդէս է բերում օրինական ճանապարհով Ռուսաստանի միջամտութեան իրաւունքը Թիւրքիայի ներքին գործերի մէջ: Առաջին անգամ պատմութեան մէջ թուրքերն իջնում էին իրանց նուաճողական հպարտութիւնից ու յայթական ամբարտաւանութիւնից ու թոյլ էին տալիս — ստիպուած էին թոյլ տալ օտարի միջամտութիւնը իրանց սեփական տան ներքին գործերի մէջ: Թիւրքիայում ապրող քրիստոնեաներն այստեղ առաջին անգամ դաշնադրական և օրինական բոլոր ձեւերով իրաւունք էին ստանում հովանաւորութիւն և պաշտպանութիւն ունենալու քրիստոնեայ աշխարհից — մեծագոյն սլաւոն ազգից: Այնուհետև այդ 7-երդ պունկտը ցաւ պիտի դառնար Թիւրքաց կառավարութեան համար: Այնուհետև ուսաներն ամեն անգամ պիտի աշխատէին օգտուել իրանց իրաւունքներին, առիթ բաց չթողնել միջամտելու թուրքերի ներքին գործերին, շատ անգամ իրօք թուրքիոյ կայսրութեան մէջ գտնուած քրիստոնեաներին պաշտպանելու, շատ անգամ էլ այդ պատրուակով բայցբոլորովին այլ նպատակներով: Կուչուկ Կայնարջին դառնում է այսպիսով արևելեան բազմակնճիւ հարցի ծննդավայրը: Քաղաքական աշխարհի համար այդտեղ է սկիզբ առնում Արևելեան հարցը, այդտեղ է նա մկրտուում և այդ կէտի վրայ հիմնում այնուհետև իւր յետագայ զարգացման ընթացքը:

Բնական է, որ Ռուսաստանի այս դերակշիւ դերն ու ազդեցութիւնը Թիւրքական գործերի վրայ չէր կարող զուր գալ միւս պետութիւններին: Աւստրիան նոյնպէս սահմանակից էր Թիւրքիային, նա նոյնպէս ցանկանում էր իւր ծովափերը ընդարձակել ի հաշիւ Թիւրքիայի: Բացի Աւստրիայից ու Ռուսաստանից Թիւրքիայում մեծ շահեր ունէին նաև Անգլիան և Ֆրանսիան, որոնց հաւասարապէս անցանկալի էր թէ Ռուսաստանի և թէ Աւստրիայի զօրանալը ի հաշիւ Թիւրքիայի և ի փոս Ծամանեան կայս-

րութեան: Սկսւում է մեծ պետութիւնների մէջ մի զիւրանազիտական, թղթի և հարց ու պատասխանի պայքար, որից այնքան ճարպիկ կերպով օգտւում են թուրք սուլթաններն ու պետական գործիչները: Թէև թիւրքիայի իրական զօրութիւնը զնալով թուլանում, նուազում է, բայց նա դեռ շատ երկար դիմանում է, շատ անգամ զրութեան իսկական տէրն է մնում շնորհիւ այն հանգամանքի, որ մեծ պետութիւններից իւրաքանչիւրն առանձին առանձին ցանկանալով իւր օգտին վերջ տալ ու բաժանել այդ հիւանդ պետութիւնը, բոլորով միասին երբէք համաձայնութեան չեն գալիս. և երբ պետութիւններից որևէ մէկը հանդէս է գալիս ուժգին թափով և վճռական գործողութիւններով շափուելու թուրք պետութեան հետ ու իւր հաշիւներն իսպառ մաքրելու նրա հետ, միւս պետութիւններն իսկոյն ահազին ազմուկ են բարձրացնում ու միաբերան ազազակում — պէտք է պահել Status quo-ն, պէտք է յարգել անձեռնամխելիութեան սկզբունքը:

Օսմանեան կայսրութեան Status quo-ն և նրա ամբողջութեան անձեռնամխելիութիւնը, իրաւ է, շատ անգամ բարեբար ազդեցութիւն է արել եւրոպական ընդհանուր քաղաքականութեան վրայ. շատ անգամ նա յետ է պահել այս կամ այն պետութեանը, պետութիւնների այս կամ այն խմբերին ընդհանուր, համաեւրոպական պատերազմից. բայց զրա հետ միասին նա պատճառ է եղել շարունակ, պատճառներից թերևս ամենազօրեղը, որ Օսմանեան կայսրութեան մէջ գտնուած քրիստոնեաների վիճակը չէ բարւոքուել անկախ պետութիւն կազմելու համար հասունացած սլաւոն ցեղերը ոչ միայն չեն ստացել այդ անկախութիւնը, այ նրանց վիճակը ամբողջ քրիստոնեայ եւրոպայի առաջ զնալով վատթարացել է ու մահմեդական մոլեռանդութեան աւար եղել: Մեծ պետութիւնների այդ յարատև մրցակցութիւնից, նրանց այդ մշտական հակամարտութիւնից օգուտողը — և ամենամեծ օգուտողը եղաւ ինքը — ամենաթոյլ ու ամենաքայքայուած պետութիւնը: Օսմանեան կայսրութեան հպատակ և աւատական մասերը —

Ռուսիան ու Սերբիան, Բոսնիան—ու Հերցեգովինան, Սև
 Լեառն ու Ալբանիան, Բուլղարիան և Յունաստանը, Մա-
 կեդոնիան, Եգիպտոսը, Տրիպոլիսը, Տունիսը, սոցա բոլորի
 ձգտումն է եղել ազատուել, պոկուել թուրքական հպատա-
 կութիւնից ու անկախ միութիւններ կազմել—և ամեն ան-
 դամ այդպիսի դէպքերում երևան է եկել բազմազուլուս և
 կնճռաշատ Արևելեան հարցը:

Եկատերինա Մեծի նուիրական իզձը՝ թուրքերին Եւ-
 րոպայից դուրս քշել և Պօլիսը դարձնել ցարերի մայրա-
 քաղաք—այսօր դեռ չէ իրականացել, արևելեան հարցը
 իւր ամբողջութեամբ դեռ չէ լուծուել մինչև օրս. բայց
 դրա փոխարէն իւրաքանչիւր անգամ, երբ նա հանդէս է
 եկել Օսմանեան ընդարձակ կայսրութեան այս կամ այն
 մասի, այս կամ այն ցեղի մէջ, պատճառ է եղել արևելեան
 մասնակի հարցերի լուծմանը:

Կուչուկ-Կայնարժու խաղաղութիւնից յետոյ Եկատե-
 րինան մի պատերազմ էլ է մղում թուրքերի դէմ: Եասսայի
 խաղաղութիւնը 1792 թուին հաստատում է 1774-ի պունկ-
 տերը: Այնուհետև Ալէքսանդր Ա-ի ժամանակ նորից է բոր-
 բոքում արևելեան հարցը. Ռուսաստանը կռուի է բռնում
 թիւրքիայի հետ 1806-ին, բայց վեց տարի յետոյ 1812
 թուին ստիպուած է լինում խաղաղութիւն կապել նրա
 հետ, որպէս զի աւելի մեծ թշնամու դէմ կռուելու հնա-
 րաւորութիւն ստանայ: 1812 թուի Բուխարեստի խաղա-
 զութեամբ Ռուսաստանը ոչ միայն նոր բան չի շահում
 (բացի մի կտոր հողից—Բեսսարաբիա) այլ և ստիպուած է
 լինում հրաժարուել Վալախիան և Մոլդաւիան հովանա-
 ւորելուց. և այդ միմիայն նրա համար, որպէս զի թիւր-
 քիայի չէզոքութիւնը շահի և ազատ ձեռքեր ստանայ
 նապոլէոնի հսկայական ուժի դէմ դուրս գալու:

Արևելեան հարցն այնուհետև ապրում է ամբողջ
 19-երդ դարում: Նա աճում զարգանում է թիւրքիայի
 թուլանալու, քայքայուելու հետ զուգընթացաբար: Յատ-
 կապէս 19-րդ դարումն է, որի ընթացքում արևելեան հար-
 ցը մի քանի անգամ զօրեղ կերպով հրապարակ է դալիս
 և եւրոպական մեծ պետութիւններին զիւանազիտական ու

շատ անգամ զինուած ընդհարման առիթ տալիս: Ուստի մենք այստեղ յարմար ենք համարում նկարագրել Օսմանեան կայսրութեան այն պայմանները 19-րդ դարի շէմքում, որոնք աւելի պիտի նպաստէին արեւելեան հարցի այդքան յաճախակի և այդպիսի թափով հանդէս գալուն*):

Օսմանեան լայնածաւալ կայսրութիւնը որպէս ասիական մի բռնապետութիւն շէր կառավարում կանոնաւոր ու մշակուած հիմնարկութիւնների միջոցով: Կենդրոնական վարչութիւնը պայմանաւորուած էր համարեա միշտ սուլթանների անձնական—շատ անգամ քմահաճ ցանկութիւններով: Կառավարութիւնը մինիստրներ ու մինիստրութիւններ չունէր. զրա փոխարէն կար մի դիւան—բարձրաստիճան մարդկանց խորհրդակցական մի մարմին: Զօրքը բաղկացած էր ամենից առաջ եանիշարիներից, որոնք Պօլսի կամ շրջակայքում գտնուած զօրանոցներում էին ապրում: Գոքա ժառանգական զինւորներ էին, նման կազակներին. բայց արդէն օտարացել էին զինւորական կարգ ու կանոնին և յաճախ իրանց զօրապետների դէմ էին դուրս գալիս: Պետութեան ֆինանսները ամենաաննախանձ զրութեան մէջ էին. չկար կանոնաւոր բիւջէ. սուլթանի և պետութեան զանձարանը շատ անգամ իրար հետ ձուլւում էին և սուլթանն յաճախ ծախսում էր պետութեան զրամը ինչպէս ցանկանար: Չկար կանոնաւոր հաշուապահութիւն, ոչ էլ ստուգիչ և պատասխանատու մարմիններ: Հարկային սիստեմը ամենախառնակ փիճակի մէջ էր: Ոչ մահմեդական բոլոր այր մարդիկ պարտաւոր էին զլիսահարկ տալ որ խարաջ կամ խարջ էր կոչւում: Թէ այդ խարաջը և թէ միւս՝ ամեն տեսակի հարկերն ու տուրքերը կապալով էին տրւում մասնաւոր ձեռնարկողների, այդպիսով աւելի ուժեղացւում

*) Յետակայ նկարագրութեան մէջ մենք օգտուում ենք ֆրանսիացի Շառլ Սենեորոսի «19-րդ դարի քաղաքական պատմութիւն» հակիրճ բայց վարպետօրէն կազմած գրքից: Չեքի տակ ունենք զերմաներէն թարգմանութիւնը «Die politische Geschichte des modernen Europas. 1910, Leipzig. Այլ և Geschichte des 19-ten Jahrhunderts von prof. Oskar Jäger I-II.

էր երկրի տեսնական անբախտութիւնը: Նահանգական վարչութիւններն ու կառավարութիւնը մի անուն ունէր միայն—շահագործումն: Պետութեան պաշտօնեաները որոնք սոճիկ չէին ստանում և դեռ այդ պաշտօններն ստանալու համար նահանգապետներին մեծամեծ նուէրներ—կաշառքներ էին տալիս, բնականօրէն անծայր, անսահման կերպով շահագործում էին բնակիչներին:

Օսմանեան պետութիւնը այդ բոլոր բացասական կողմերի հետ միասին ունէր և մի առանձնայատուկ կողմ, ամբողջ քրիստոնէայ եւրոպայի մէջ նա մահմեդական պետութիւն էր: Սուլթանը բոլոր հաւատացեալների տէրն էր, նրանց խալիֆան, Գուբանը նրանց օրէնքն էր, ոչ միայն կրօնական տեսակէտով, այլ և քաղաքական, քաղաքացիական: Բոլոր մահմեդականների օրէնքն էր—Գուբանը: Կրօնն ու պետութիւնն իրար հետ ձուլուել էին և կրօնը հրամայում էր պետութեանը: Աշխարհական իշխանութիւնը արգելում էր իւրաքանչիւր մահմեդականի մի որևէ այլ կրօն ընդունելու: Բուն օսմանեան ժողովուրդը բաղկացած էր բացառապէս մահմեդականներից: Բայց այդ ժողովուրդը ազգազրական տեսակէտով մի ազգ չէր, ոչ էլ մի հատիկ լեզուի և նման սովորութիւնների միջոցով իրար հետ կապուած խումբ—ինչպէս եւրոպայի ազգութիւնները: Մահմեդական ժողովրդի մէջ կային շատ ցեղեր, որոնք բոլորովին այլ ծագում և այլ ինքնուրոյնութիւն ունէին, բայց ընդունել էին մահմեդականութիւնը և համարում էին օսմանեան ժողովրդի մէջ, եթէ նոյն իսկ պահած լինէին իրանց լեզուն կամ սովորութիւնները: Այնպէս որ Թիւրքիա, Թիւրքական պետութիւն խօսքերը բառացի չպիտի հասկանալ, որովհետև մանաւանդ եւրոպական Թիւրքիայում բուն Թուրքերը ոչ միայն մեծամասնութիւն չեն կազմում, այլ և շատ աննշան մասն են ամբողջ ազգաբնակչութեան, Բոսնիայի բնակիչները կրօնատներն են, Եպիրոսինը՝ ալբանացիք, Մակեդոնիայում ապրում են բոլղարները (պոմակս) և կղզիների վրայ՝ յոյները: Այս բոլոր տեսակի մահմեդականները պետութեան առաջ հաւասար

են, հաւասար թէ օրէնքով և թէ գործնական կեանքի մէջ, բաւական է, որ նրանք մահճեղական են:

Բայց բացի մահճեղականացած այլացեղերից, կան և այլակրօն հպատակներ, որոնց նկատմամբ մահճեղական պետութեան վերաբերմունքն արդէն տարբեր է: Նուաճուած երկիրների և նահանգների հին բնակիչները քրիստոնեայ են մնում և կոչում են ուայա (հօտ), նրանց համար փակ էր մուտքը թէ զօրքի և թէ բարձր պաշտօնների նկատմամբ. նրանք օտար էին օտտոմանեան կայսրութեան մէջ: Թէև մահճեղական պետութիւնը հանդուրժում է նրանց, բայց պետական ամբողջ կեանքից հեռացնում, կղզիացնում էր նրանց: Խարջի վճարումը առանձնայատուկ նշան էր օսմանեան պետութեան քրիստոնեայ հպատակների համար: Երկրի մահճեղական դասը ուայայի զիմաց արխտոկրատ դասակարգն էր կազմում: Թիւրքիայի ամբողջ ազգաբնակչութիւնը երկու իրար հակառակ ու թշնամի մասերի էր բաժանւում. մէկը՝ բոլոր քաղաքական և պետական իրաւունքներից զուրկ, միւսը՝ ամբողջ իշխանութեան տէրը: Քաղաքական անհաւասարութիւնից հետզհետէ ծագում է նաև հասարակական-օրգիւլական անհաւասարութիւնը: Մահճեղականներն ամբողջ պետութեան մէջ ազաներ ու կալուածատէրեր էին, իսկ քրիստոնեաները՝ հպատակներ ու կապալառուներ: Երկու՝ դէպքում ևս-թէ քաղաքական և թէ տնտեսական անհաւասարութեան դէպքում՝ ամենազլխաւոր ազբիւրն այդ անհաւասարութեան-Իսլամն էր, մահճեղականութիւնը, որն ընդհանրութեան ոչ մի կէտ չունէր քրիստոնէութեան հետ:

Քրիստոնեաները այս իրաւագուրկ և բացառիկ դրութիւնից բնականօրէն գուրս գալու միջոցներ և հնարներ պիտի որոնէին: Եւ ամենից առաջ իրանց կրօնը, եկեղեցիներն ու հոգևորականութիւնը, դրանց հետ միասին նաև ազգային ինքնուրոյնութիւնները պաշտպանելու համար քրիստոնեաները շատ անգամ դիմել են սուլթաններին և ապահովութիւն ու երաշխաւորութիւն խնդրել իրանց կրօնի համար: Օսմանեան պետութեան քրիստոնեաները բնական

կերպով կրօնական միութիւններ են կազմել և այդպիսի կազմակերպութիւններին ընդառաջ է եկել ինքը—Թիւրքական պետութիւնը, որովհետև այդ կազմակերպութիւնների շնորհիւ հեշտանում է կառավարութեան յարաբերութիւնը քրիստոնէայ հօտի հետ: Պետութեան առաջ այդ քրիստոնէայ համայնքների գլխաւորները (պատրիարք, մետրապօլիտ, եպիսկոպոս) ներկայացուցիչ և պատասխանատու էին. միաժամանակ նրանք իրանց ձեռքում կենդրոնացնում էին քրիստոնէաների վերաբերմամբ դատաստանական և քաղաքացիական իրաւասութիւններ:

Իայց այդ բոլոր ներքին միջոցները շատ քիչ էին քրիստոնէաների կեանքն ու գոյքը ապահովելու թէ մահմեդական պետութեան կամայական ու բռնապետական դործողութիւններից և թէ մահմեդական ազգաբնակիւթեան անպատասխանատու, անսանձ ու վայրագ շահագործումից: Այդ քրիստոնէաներին պաշտպանելու, նոցա շահերը Բարձրագոյն Դրան առաջ լսելի դարձնելու համար Եւրոպական մեծ պետութիւնները կոնսուլներ են նշանակում, որոնք սկզբնապէս պաշտօն ունէին հետեւելու թիւրքական պետութեան մէջ գտնուած քրիստոնէաներին: Ակզբում Թրանսիան էր, որ ձեռք է բերում պաշտպանութեան իրաւունք կաթոլիկների նկատմամբ, ապա Ռուսաստանը կուշուկ կայնարջու խաղաղութեամբ Եւրոպական թիւրքիայում եղող օրթոդոքս և միւս քրիստոնէաների նկատմամբ ստանում է առաջադրութեան և պաշտպանութեան իրաւունք: Այդպիսով Եւրոպական երկու մեծ պետութիւնները թիւրքիայի ներքին դործերի մէջ խառնուելու իրաւունք են ձեռք բերում:

Այսպիսով տեսնում ենք, որ թիւրքական պետութիւնը քայքայւում և անզօրանում է ոչ այնքան զինուորական և այլ պատճառներից, այլ ամենից՝ առաջ նրա թուլութիւնը պիտի փնտրել կրօնական հանգամանքի մէջ: Կառավարութիւնը իշխում էր ոչ թէ մի ազգի, այլ ազգերի երկու խմբի, որոնք իրար վրայ դարսուած էին ու իրար անհաշտ թշնամիներ և որոնցից թուով բազմաթիւ և ամբողջ Եւրոպական պետութեան ազգաբնակիւթեան մեծա-

մասնու թիւնը տիրող ազգին հակառակ էր: Քրիստոնեաները պետութեան բնական թշնամիներն էին. նրանք կազմակերպուած էին ազգութիւնների մէջ և պատրաստուած էին հետզհետէ ապստամբութեան: Սովորաբար նոցա ձգտումներն ու անկախութեան տենչերը քաջալերում ու հովանաւորութիւն էին զանում Ներսիսեան որ և է մեծ պետութեան կողմից, որը մի առժամանակ կամ մշտապէս թշնամի էր թիւրքիային և կամ թիւրքիայի ներքին զործերում իրան զաշնակից էր որոնում: Այդ պետութիւններն ինչպէս ասացինք Ռուսաստանն ու Ֆրանսիան էին, յաճախ միանում էր նաև Աւստրիան: Յատկապէս 18-րդ դարում թիւրքիայի քաղաքական գոյութիւնը մի քանի անգամ ուժգին կերպով վտանգուել է, Ռուսաստանի և Աւստրիայի կոալիցիան քիչ է մնացել, որ աւարը բաժանի իր մէջ—բայց շուտով վրայ են հասել նապոլէոնական պատերազմները և թիւրքիային ժամանակ տուել դեռ ապրելու:

Վիեննայի վեհաժողովից յետոյ արևելեան հարցը նոր թափով հանդէս է զալիս: Ռուսաց Ալէքսանդր I կայսրը հէնց այդ վեհաժողովի մէջ պետութիւնների ուշադրութեանն է յանձնում Օսմանեան կայսրութեան վիճակը: Մեծ պետութեան ներկայացուցիչները մտածում են. ինչ պէտք է լինի այդ կայսրութեան զրութիւնը: Արդեօք նա պիտի շարունակէ իւր անկախ սուլթանն զոյութիւնը, թէ պէտք է միւս պետութիւնների մէջ բաժանուի. սուլթանին հպատակ քրիստոնեաները ուստի պէտք է մնան թէ քաղաքական անկախ միութիւններ կազմեն: Այս հարցերի այս կամ այն կերպ պատասխանից կախուած էր թիւրքիայի ապագան: Ինչ խօսք, որ Ներսիսի վեհապետներին հետաքրքրողն սկզբնաւորապէս առաջին հարցն էր. երկրորդ հարցը, որ և կազմում է արևելեան հարցի բուն միջուկը, հետզհետէ է զարգանում, անկախ վեհապետների կամքից, տարուելով սկզբում միմիայն Օսմանեան կայսրութեան քրիստոնեայ հպատակներից:

Առաջին մեծ ճգնաժամը, որ թիւրքիան ունենում է իւր քրիստոնեայ հպատակների պատճառով—դա Յունանական հարցն է:

Յոյները ենթակայ էին այն բոլոր աննպաստ պայմաններին, որոնց մէջ դրուած էին Թիւրքիայի նաև միւս քրիստոնեաները: Բայց բացի դրանից յոյների գործը մի այլ կողմից ևս վատ էր: Նրանք իրանց յաճախակի ապստամբութիւններով ու խռովութիւններով մահամեղական ժողովրդի և պետութեան մոլեռանդութիւնն ու զայրոյթն էին շահել և այժմ 19-րդ դարի առաջին քառեակում կարծես կորստեան անդունդի բերանն էին հասել: Պետութիւնը նրանց ապստամբութիւնը շատ ծանր կերպով ճնշել էր: Յոյների հայեացքն ուղղուած էր բնականաբար Ռուսաց Նիկողայոս I կայսեր, որ նոր էր գահ բարձրացել: Բայց Նիկողայոս I կայսրը իւր ներքին համոզումներով և լեզիտիմիտետով չէր կարող յոյներին համակրել և նրանց միայն խռովարար կարող էր անուանել: Սակայն պետութեան շահերը այս դէպքում ներդաշնակ չէին կայսեր համոզմունքներին և համակրանքներին: Ռուսաց պետութեան բնական շահերը պահանջում էն ոչ թէ ձեռք քաշել Թիւրքիայից, այլ այնտեղ պատահած իւրաքանչիւր յարմար դէպք շահագործել ի վնաս և ի թուլացումն Թիւրքիայի: Բարեբախտաբար հէնց այդ ժամանակները Անգլիան ձեռք է կառկառում Ռուսաստանին և նրա հետ 1826 թ. ապրելի 4-ին Պետերբուրգում համաձայնութիւն կայացնում, որի համեմատ որոշւում է Յունաստանն յայտարարել կիսանկախ պետութիւն—Սուլթանին հարկատու: Այնուհետև դէպքերն արագ կերպով յաջորդում են իւրար: Մենք այդ դէպքերը չենք պատմի, որովհետև ընդհանրապէս դէպքեր չենք պատմում, այլ կրբացատրենք դիւանագիտական այն ակտերը, որոնք եղան արևելեան հարցի համար յունական խնդրի վերաբերեալ:

Պետերբուրգեան համաձայնութեանը շուտով միանում է նաև Ֆրանսիան և երեքով միասին ստորագրում են Լոնդոնի դաշնադրութիւնը յունուարի 6-ին 1827 թուին, որի համաձայն որոշւում է որ Յունաստանը վաստակական պետութիւն դառնայ ներքին ինքնավարութեամբ. իսկ եթէ Թիւրքիան կընդիմանայ, այն ժամանակ երեք

պետութիւնները ուժով կը ստիպեն նրան: Եւ իրաւ, ուժի կարիք է զգացուում, որովհետեւ շատ չոր կերպով Թիւրքիան մերժում է այդ առաջարկը և զիմում է եզրիպտոսի Ալի փաշային, որ օգնութեան հասնի: Եւստով Ալի փաշայի որդի Իբրահիմ փաշան եզրիպտական նաւատորմիդի գլուխն անցած Պելեպոնեսեան ջրերն է լողում և եթէ չլինէր Ռուսաց, Ֆրանսիացոց և Անգլիացոց միացեալ նաւատորմիդը, յոյների ճովափնեայ քաղաքները հողին կը հաւասարուէին: 1827 թ. հոկտ. 20-ին նաւարինի նաւահանգստի առաջ տեղի է ունենում ճովային մի ճակատամարտ յիշեալ երեք ազգերի և եզրիպտական ու Թուրքական միացեալ նաւատորմիդների մէջ: Այդ կռուի մէջ Թուրք-եզրիպտական ճովային ուժը իսպառ վերջանում է: Թիւրքիան կատաղած պատերազմ է յայտարում Ռուսաստանին, որին Թուրքերն համարում էին իրանց ամենաոխերիմ թշնամին: Անգլիան և Ֆրանսիան յետ են քաշուում և ռուսական զօրքերն երկու կողմից Թիւրքիա են մտնում: Իրիւջը Եւրոպական Թիւրքիա իսկ Պասկելիչը՝ ասիական: Ռուսներն իրար յետևից զբաւում են Դանուբեան իշխանութիւնները, Կարսը, Արգահանը, Էրզերումը: 1829 թուի օգոստոսի 20-ին Ադրիանուպոլիսն արդէն ռուսների ձեռքումն էր: Պոլսում իզուր էր ծածանւում մտրգարէի դրոշակը և իզուր կրօնական մոլեռանդութիւնն աշխատում էին բորբոքել. Թիւրքիայի ռազմական ուժերն սպառուել էին և նա ստիպուած էր Պրուսիայի միջնորդութիւնն ընդունել և խաղաղութիւն կապել Ռուսաստանի հետ:

1829 թուին սեպտեմբերի 14-ին ստորագրւում է Ադրիանուպոլսի խաղաղութիւնը, որը արևելեան հարցի զարգացման երկրորդ նշանաւոր կայանն է: Այդ խաղաղութեամբ Յունաստանն ազատւում էր Մոլդաւիան, Վալախիան և Սերբիան ինքնավարութիւն էին ստանում: Ռուսաստանն ստանում էր Դանուբի գետաբերանի ու Ախալցխայի փաշայութիւնը, նորից հաստատում էր Թիւրքիան Ռուսաստանի ձեռք բերած քրիստոնեաների պաշտպանութեան իրաւունքը, որ նա զիջել էր Կուչուկ Կայնարջու խաղաղութեան մէջ:

Գէորգ Ալբունեան.